ԹԵՐԹԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

Ժ. ՏԱՐԻ ԹԻՒ 14. | 1852 | ՅՈՒԼԻՍԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Եպիկտետոսի առածք [1]:

Որ կենցաղ համար կարգ մը կամ կանոն մը դնելը ամենահարկաւոր բան է, և ետքը պէտք է որ ան և իսկ տեղ որ գտնուիս զանոնք անխախտուտ պահես, թէ կենցաղավարելու որ ըլլաս քու նը-մանեներուդ հետ, և թէ անոնցմէ հե-ռու առանձին տեղ մը որ քաշուիս:

Զեռքդ եկածին չափ ջանա լուռ կենալ, և ոչ երբէք հարկաւորէն աւելի բան խօսիս. նաև ան ատենն ալ որ-չափ որ կարելի է համառօտ ըլլայ խօսքդ:

Շատ մի խնտար, ոչ յաճախ, և ոչ ալ անպատշաճ կերպով:

Ընոնք որ մարմնոյ պիտոյից համար կը ծառայեն, ինչպէս են, ուտել, խմել, զգեստ, տուն, ու ծառայ, այնչափ միայն ունեցիր որչափ որ հարկաւորը կը պա-հանջէ, և միտքը առողջ պահելու հա-մար հարկաւոր է. ու քեզմէ մերժէ այն բաները որ զեղխութեան և հա-ճոյից կը ծառայեն:

Թէ որ մէկը խմացընէ քեզի որ ուրիշ մը չարախօսութիւն ըրեր է վրադ, ամե-նևին հոգ մի ըներ ըսածները սուտ հա-նելու. հապա միայն պատասխան տուր,

[1] Տես երես 49:

թէ բոլոր իմ պակասութիւններս յայտնի ըլլային՝ շատ տարբեր բան վրաս կը խօսուէր։

Այնուհանդերձ մոքէդ ալ չանցընես ուրիշները խնտացընելու, վասն զի աս բանովս ոամկին անշնորհք կերպերուն նմանելէն զատ, նաև աս կերպով քեզի վայլած ակնածութիւնն ու մեծարանքը կը պակսի։

Ուրիշեցիր որ բան մը պիտի ընես, մի մտածեր թէ ուրիշը զքեզ կը դիտէ. վասն զի թէ որ աղէկ է ըրածդ՝ յանդիմանութենէ վախնալու չես՝ որն որ անիրաւութիւն մը կ'ըլլայ. իսկ թէ որ գէշ է մտածածդ, չէ թէ միայն պիտի ջանաս որ ուրիշները քեզ չտեսնան ընելու ատենդ, հապա նաև անկէց բոլորովին ետ կենալը անհրաժեշտ պարտք է քեզի։

Ով որ այնպիսի պաշտօն մը վրադ առնես որ քու կարողութենէդ վեր է. բաց 'ի գէշ կատարելէդ պարտաւորութիւնդ, նաև բոլորովին կը գոյուի քեզի ուրիշ բանի ձեռք զարնելու ճամբան, որուն մէջն որ կրնայիր յաջողութիւն գտնել։

Ինչու մի հեռանար չափաւորութենէ և ոչ անոր սահմանէն դուրս ելլաս, վասն զի այս բանս արհամարհելովդ քու կործանմանդ երկբայութիւն չմնար։

Չափազանց հոգով մտադրութիւն ընել մարմնոյ պիտոյիցը՝ ցած հոգւոյ նշան է. մեր ամէն խնամները պէտք է մտաց վրայ թափել։

Մենայն բան երկու երես ունի, առոնցմէ մէկը տանելի է, իսկ մէկալը անտանելի։ Որինակի համար ենթադրէ որ քու եղբայրդ քեզի մէկ նախատինք մը ընէ. ան ատենը պիտի չմտածես թէ եղբայրդ քեզի նախատինք կ'ընէ, որովհետև ըրածը՝ այս կողմանէ մտածելով անտանելի է. հապա մտածէ թէ ինչպէս երկու եղբայր մէկտեղ մեծցեր էք, և անիկայ դեղ մը կ'ըլլայ եղբօրդ ըրածը արդարացընելու, ու միանգամայն տանելի կ'ընէ։

Այսոնք ըլլան այն նշանները որոնցմով պիտի ճանչնաս թէ մէկը առաջ կ'երթայ առաքինութեան ուղղութեան մէջ։ Ով որ ամենևին մէկը չյանդիմանէ, չգովէ, չնախատէ և ոչ մեղադրէ. թէ որ չպարծի թէ ինչ աստիճանի է ինքը և որչափ որ բան գիտէ. թէ որ երբեմն իրեն դէմ բան մը ըսուի և կամ մեծ արգելք մը դրուի իրեն գործքին, ինքը զինքը մեղադրէ. թէ որ ինքն ինքիրենը խնտայ զինքը գովողներուն վրայ. թէ որ յանդիմանուելու որ ըլլայ ամենևին չընեղանայ, ընդհակառակն այնպէս ընէ ինչպէս նորաբոյժները որ ծանր կը շարժին որ ներքին հիւթերը չնանգարին. թէ որ ինքը բացարձակ տէր ըլլայ իր բաղձանացը և ուրիշ բանի ներհակութիւն չունենայ՝ բայց եթէ անոր որ իրմէն կախուած բաներուն դէմ է. թէ որ չփափագի սաստիկ ցանկութեամբ որ և իցէ բանի. թէ որ ամենևին փոյթ չընէ իմաստնոյ կամ տգէտի կարգը համարուելուն համար։ Երջապէս թէ որ իր վրայ չվստահանայ ընտանի թըշնամւոյ մը պէս որուն այլայլութիւններէն պէտք է վախնալ. յիրաւի այսպիսի մարդը առաքինութեան համն առած պիտի ըլլայ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԲՈՂ

ՑԵՐԱՆԵԼԻ ԵՐԷՑՆ

Ի Ս. ՂԵՒՈՆԴ

Համագումար ժողով սիրայորդոր ակրմբիս, ո՞ աստուածապատիւ Տէր և Հարք և Եղբարք պատկառելիք, և ներողամիտ ունկնդրութիւն ուսումնական և գրաւոր դոյզն վաստակոց փութաջան աշակերտելոցս[1], խրախոյս մեծ և քաջալերս կարգան նոցա արիաբար աստի և անդր և ս զնահատակութեանցն իւրեանց յառաջ վարել զհանդէս. 'ի

[1] Խօսեցաւ Ճառս 'ի Հանգիսի հարցաքննութեան երրորդի ամի ուսմանց ԻԳ դասուն Մխիթարեան Սանկտ-Յերոնիմոս աւուր Յունիս ամսոյ։